

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Բանկային համակարգի կայունությունը ցանկացած երկրի տնտեսության զարգացման և աճի ամենակարևոր գործոններից մեկն է: Բանկային համակարգի կայունությունը, ապահովվածությունը և թափանցիկությունը թույլ են տալիս բարձրացնել բանկերի գործունեության կանխատեսելիությունը և այլ տնտեսական սուբյեկտների համար դրանց գրավչության աստիճանը: Բանկային համակարգի կայունությունը մեծամասամբ որոշվում է ոչ միայն մրցակցության մակարդակով և աճի տեմպերով, այլև ռիսկի համընդհանուր մակարդակով: Ռիսկը, ըստ էության, տնտեսական միջավայրի անկանխատեսելիության հետևանքով առաջացած հավանական դրական կամ բացասական ելքերն են, իսկ ռիսկի կառավարումը ենթադրում է, ձգտելով սպասված դրական ելքի, նվազեցնել հավանական բացասական ելքի ազդեցությունը:

Տնտեսագիտական գրականության մեջ բազմիցս կարելի է հանդիպել ռիսկի էության և հեջավորման վերաբերյալ բազմաթիվ մեկնաբանությունների և վերլուծությունների: Ռիսկի էությունը և բնույթը ուսումնասիրվել են բազմաթիվ տնտեսագետների կողմից, իսկ դրա նվազեցման կամ սահմանափակման հնարավոր միջոցառումները բավականին լայն կիրառություն ունեն տարբեր երկրներում: Կարելի է նշել, որ ներկայումս ՀՀ բանկային համակարգում ռիսկերի կառավարումը բանկի հուսալի գործունեության կարևորագույն գործոն է: Բանկային ծառայությունների բազմատեսակությունը և բանկային բիզնեսի հետագա զարգացումը առաջ են բերում համակարգային տարբեր ռիսկեր, որոնք ունեն ծագման ոչ թե մեկ, այլ մի քանի աղբյուրներ: Այս պայմաններում բանկերը ավելի քան կարիք ունեն ռիսկերի կառավարման այնպիսի համակարգի մշակման և կիրառման, որը միաժամանակ ապահովի ակտիվների արդյունավետ տեղաբաշխում հնարավոր կառավարելի ռիսկեր


գրավել շուկայի նոր սեգմենտներ: Մպառնողական շուկայի վարկավորման և ներդրումների ֆինանսավորման ծավալների աճը բերում են ռիսկերի մակարդակի կտրուկ աճ, որոնք երբեմն լինում են նաև անկառավարելի: Հաշվի առնելով երկրում տիրող տնտեսական ակտիվությունը՝ կարելի է ենթադրել, որ ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկի մակարդակը կարող է նաև աճել:

Բանկային համակարգի միջնորդության մակարդակը դեռևս ցածր է, բայց նկատելի են աճի միտումներ: Այսպես, եթե 2002թ. բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը 6.2% էր, 2006թ.¹ 8.6%, ապա 2007 թվականին այն աճել է 4.4 տոկոսային կետով՝ կազմելով 13.0%: Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը կայուն աճել են, ընդ որում՝ վարկերի աճի տեմպը վերջին տարիներին գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, արդյունքում ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռը 2007 թվականին աննախադեպ աճել է՝ տարեսկզբի 43.7%-ից տարեվերջին կազմել է 53.5%: Դա որոշակի ազդեցություն է ունեցել վարկային պորտֆելի որակական ցուցանիշների վրա: Չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.6%-ը, նախորդ տարվա 6.9%-ի փոխարեն:

Վերջին երկու տարիներին չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը կազմում է 1.6%, որի մեծ մասը հսկվող դասի ակտիվներ են: Որպես հետևանք, 2006թ. ընթացքում զուտ մասհանումների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կազմել է 0.4% և, չնայած վարկերի դինամիկ աճին, ակտիվների վերադարձելիության աստիճանը կազմել է 99.7%, որը վատ ցուցանիշ չէ:

Բայց և այնպես վարկային ռիսկի վերլուծությունը ամբողջականացնելու համար կարևոր է դիտարկել ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային ներդրումներում:

Ինչպես երևում է ստորև բերված գծապատկերից, 2006թ. ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը մասամբ աճել է: 2007 թվականին դարձյալ արձանագրվել է ժամկետանց վարկերի աճ՝ 0.6 տոկոսային կետով և կազմել է 11.3 մլրդ դրամ:



2007թ. սկզբի դրությամբ ընդհանուրի մեջ դասակարգված վարկերի տեսակարար ամենամեծ կշիռը մարզային կտրվածքով ըստ ոլորտների դիտվել է էներգետիկայի ոլորտում՝ Շիրակում, գյուղատնտեսության ոլորտում՝ Լոռիում, առևտուր՝ Արագածոտնում, թեթև արդյունաբերություն՝ Շիրակում և այլն:

ՀՀ բանկային համակարգում կարելի է նկատել նաև գործառնական ռիսկի աճ: Դա բնութագրվում է բիզնեսի ծավալի աճով: Գործառնական ռիսկերի շարքում առաջնահերթ կարելի է դիտարկել կադրերի հետ կապված ռիսկը: Մասնաճյուղերի ավելացումը պահանջում է կադրերի ավելացում, որոնք պետք է լինեն բավականին պատրաստված և որակյալ: Ներկայումս ցանկացած ֆինանսական ինստիտուտի զարգացման համար ռիսկերի գնահատման և կառավարման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների բավարար մակարդակից զատ բանկի ղեկավարները պետք է ունենան կորպորատիվ կառավարման վերաբերյալ գերազանց գիտելիքներ: Կորպորատիվ կառավարման առաջնահերթ խնդիրների շարքին կարելի է դասել.

- ռազմավարական որոշումներ կայացնելիս բանկի խորհրդի դերի բարձրացումը,
- բանկի սեփականատերերի և ղեկավարների՝ տարբեր խմբերի միջև շահերի բախումը բացառելու մեխանիզմների ստեղծումը,
- ռիսկերի կառավարման համակարգի ստեղծումը, որը հնարավոր կլինի օգտագործել տարբեր տեսակի ռիսկերը սահմանափակելու համար:

Կորպորատիվ կառավարման համակարգը դիմամիկ փոփոխվող և զարգացող համակարգ է: Կորպորատիվ կառավարման ժամանակակից սկզբունքների կիրառումը թույլ է տալիս բանկերին մի կողմից պատրաստվել Բազելյան կոմիտեի առաջարկների ընդունմանը, մյուս կողմից՝ բարձրացնել բանկային բիզնեսի արդյունավետությունը: Կորպորատիվ կառավարման թափանցիկ համակարգի կիրառումը հնարավորություն է տալիս բանկերին իրենց գործընկերների համար լինել ավելի կանխատեսելի, որը կապիտալի շուկայում արդյունավետ գործելու էական գործոն է:

ՀՀ Կենտրոնական բանկը հայտարարել է Բազել 2-ի ներդրման նպատակի մասին: Ակնհայտ է, որ բանկային բիզնեսի արդյունավետ կառավարման ժամանակակից ստանդարտների ներդրմանն ուղղված քայլերը դրական հետևանք են ունենալու: Ակնհայտ է նաև, որ ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատ

ենք, Բազել 2-ի ներդրման դրական ազդեցությունն ակնհայտ է: Մակայն նշված նպատակներին հասնելու համար բանկերը ստիպված են լինելու հաղթահարել մի շարք խաչընդոտներ: Դա կապված է տարբեր երկրներում ֆինանսական ինստիտուտների զարգացման աստիճանների տարբերության հետ: Կապիտալի և պահուստների համալրման խնդիրները ավելի հեշտ կլուծվեն Եվրամիության զարգացած երկրներում և ԱՄՆ-ում, քան ՀՀ-ում և անցումային տնտեսությամբ այլ երկրներում:

Տնտեսության զարգացումը ստիպում է բանկերին գրավել շուկայի նոր հատվածներ և մատուցել նոր ծառայություններ: Մակայն ավանդների ներգրավման և վարկերի տրամադրման հետ կապված գործառնությունները շարունակում են մնալ որպես բանկային բիզնեսի հիմնական գործունեություն: Միջոցների ներգրավման և տեղաբաշխման հետ կնապված տոկոսադրույքի ռիսկը շարունակում է մնալ ժամանակակից ֆինանսական ինստիտուտների հիմնական ռիսկերի շարքում: Բազելյան կոմիտեի առաջարկներում բերվում է տոկոսադրույքի ոչ բարենպաստ փոփոխման հետ կապված ռիսկերի հետևյալ դասակարգում՝ բազիսային ռիսկ, տնտեսական ռիսկ, եկամտաբերության ռիսկ և գերազնահատման ռիսկ: Տոկոսադրույքի ռիսկը վերլուծելիս այն կարելի է բաժանել երկու հիմնական դասի, այն է՝ համակարգային և ոչ համակարգային: Այս ռիսկերի մեծությունը սովորաբար կախվածության մեջ է գտնվում բանկերի ակտիվների և պասիվների չափերից: Բանկի ակտիվների մեծացման և դիվերսիֆիկացման ժամանակ ոչ համակարգային ռիսկը նվազում է: Համակարգային ռիսկի աղբյուրները բազմաթիվ են, ուստի այն կախված է ինչպես երկրի տնտեսության զարգացման մակարդակից, այնպես էլ ակտիվների և պասիվների կառավարման բանկի ընտրած քաղաքականությունից: Չնայած տոկոսադրույքի ռիսկը ՀՀ բանկային համակարգում բավականին զսպված է, այնուամենայնիվ այն էապես կարևորվում է՝ պայմանավորված այն փաստով, որ բանկերի եկամուտների հիմնական աղբյուրն են տոկոսային եկամուտները (համախառն եկամտի 44%-ը 2005թ. բաժին է ընկել տոկոսային եկամուտներին), և տոկոսային մարժայի նվազման սցենարի դեպքում այլ հավասար պայմաններում ակնկալվում է բանկային համակարգի գոտ տոկոսային եկամուտների նվազում¹: 2007թ. փետրվարին բանկերի ոչ տոկոսային և տոկոսային ե

արդյունքում բանկային համակարգում արձանագրվել է՝ 2006 թվականին 272 մլն վնաս, 2007 թվականին՝ 177 մլն վնաս, որը համապատասխանաբար կազմում է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.3 և 0.1%-ը: 2007 թվականի ընթացքում նորմատիվային դաշտի փոփոխությունների արդյունքում արտարժույթային ռիսկերի նորմատիվային պահանջները հանվեցին, իսկ 2008 թվականի հունվարից կապիտալի համարժեքության նորմատիվը փոփոխվելու է՝ ներառելով մակ արտարժույթային ռիսկի գործոնը: Հատկանշական է, որ այս պայմաններում արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից բանկային համակարգն արձանագրում է եկամուտների աճի միտում: Այսպես, 2006 թվականին ունեցել է՝ 6.4 մլրդ, 2007-ին՝ 8.6 մլրդ դրամ եկամուտ: Հարկ է նշել, որ արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդաբանությամբ կատարվող հաշվարկները հնարավորություն են տալիս բավական մեծ ճշտությամբ կանխատեսել ռիսկի հնարավոր ազդեցությունը:

Ռիսկերի կառավարման ժամանակակից համակարգը անցել է զարգացման բավականին երկար փուլ, այդ ընթացքում կատարելագործվել են ռիսկերի վերլուծության և վերահսկման ընթացակարգերը: Ներկայումս դրանք կրում են ավելի համակարգված բնույթ, որի հիմքում ընկած են տարբեր իրավիճակներում ռիսկերի կշիռների որոշման հաշվարկները: Այդպիսի հաշվարկները թույլ են տալիս ստեղծել բանկի ամբողջական ռիսկի որոշման վերլուծական և ստատիկ բազաներ: Ամբողջական ռիսկի վերլուծության համակարգի կառուցումը ներառում է վերլուծության հետևյալ երեք հիմնական բաղադրիչները.

- շուկայական, տոկոսադրույքի, իրացվելիության և վարկային ռիսկերի վերլուծություն,
- տեխնոլոգիական և գործառնական ռիսկի վերլուծություն,
- ռազմավարական սխալների հետ կապված ռիսկերի վերլուծություն:

Վերջինս զարգացման սխալ ռազմավարության կամ տակտիկայի ընտրության արդյունքում հնարավոր վնասների ռիսկ է:

Ելնելով նշվածից՝ ակնհայտ է, որ բանկերը այսօր պատրաստ չեն լիարժեք տիրապետել ռիսկերի կառավարման մեխանիզմներին և դրանց գնահատման բարդ պրոցեսներին: Մյուս կողմից դրա իրականացումը համապատասխան խորությամբ և ամբողջականությամբ բանկերից պահանջում է զգալի ֆին